Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
դեկտեմբերի 10-ի N 359 - Ա որոշման

ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1.	Ծրագրի նպատակը	«Շեն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով բացահայտված և համայնքային ժողովներում հաստատված հետևյալ խնդրի լուծումը. • Խմելու և ոռոգման ջրի համակարգերի կառուցում և նորոգում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ
3.	Բարեգործը	1. «Շէն-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն, հասցեն՝ 24 rue de Maubeuge, 75009, Paris, France 2. Հաց աշխարհին - Գերմանիայի Եկեղեցիների Ընկերակցություն, Bread for the World - Church Development Service հասցեն՝ Caroline - Michaelis-Str.1, 10115 Berlin, Germany 3. Շվեյցարիայի Միջեկեղեցական աջակցություն (EPER), հասցեն՝ Bd de Grancy 17bis Case postal 536, CH-1001 Lausanne, Switzerland 4. «Յալկեզյան» հիմնադրամ-Կանադա, հասցեն՝ 191 University Avenue East, Cobourg, Ontario K9A 4X6 Canada
4.	Ծրագիրը կատարողը	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն, հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 110, հեռ. 060 499 010, 010 567031, ՀՎՀՀ՝ 01503283

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզեր, ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղեր և նախկին շրջկենտրոններ, բնագավառը՝ ջրամատակարարում
6.	Ծրագրի բյուջեն	250.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, հինգ տարվա համար
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի, ԼՂՀ հեռավոր,սահմանամերձ գյուղերի և նախկին շրջկենտրոնների բնակիչները: Գյուղերը, որտեղ կիրագործվեն մարդասիրական ծրագրեր, կընտրվեն «Շեն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով, հաշվի առնելով ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի «Ենթակառուցվածքներ» բաժնում տեղ գտած դրույթները և 2017-2022թթ. ՀՀ Կառավարության ծրագիրը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019-2023 թթ. ընթացքում կնորոգվեն խմելու ջրագծեր 130.000 ԱՄՆ դոլար արժեքով և ոռոգման ջրագծեր 120.000 ԱՄՆ դոլար արժեքով
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինմոնտաժային տեխնիկա, շինանյութեր՝ պոլիեթիլեային խողովակներ ընդամենը 170,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ արժողությամբ (ձեռք բերվող խողովակների տրամագիծը և պատի հաստությունը կորոշվի յուրաքանչյուր առանձին ծրագրի պահանջներին համապատասխան), մետա դյա խողովակներ 32,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ արժողությամբ, միացումներ, բաժանարարներ, փականներ ընդամենը 8,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ արժողությամբ, խողովակաշարերի տեղադրման և նորոգման շինմոնտաժային աշխատանքներ 40,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ արժողությամբ (ընդամենը ձեռք բերվող նյութերի նախատեսվող գինը՝ 210.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ներքին շուկայում գնվող և 40.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ աշխատանք)

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Տվյալ ծրագրի շրջանակներում կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	«Շեն» ԲՀԿ առաջարկվող ծրագրի իրականացման ընթացքում համագործակցելու է ՀՀ և ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությունների, ինչպես նաև նշված մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	• «Շեն» կազմակերպության լիազորված ներկայացուցիչները պարբերաբար պետք է այցելություններ կատարեն ծրագրերի իրագործման վայրեր՝ աշխատանքների ընթացքը ստուգելու համար: • Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհատու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում: • Համաձայն ընդունված կարգի պարբերական հաշվետվություններ կներկայացվեն Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ